ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.12.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/109

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ

Բողոք բերող՝ «Լեյկո» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ներկայացուցիչ՝ Տ. Միրզոյանի

«Լեյկո» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Դ. Հովսեփյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ԷԱՃԱՊՁԲ-2022/16-7-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ, Բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Լեյկո» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 25.11.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ԷԱՃԱՊՁԲ-2022/16-7-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունելով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշում:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 25.11.2021թ.-ին:

26.11.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/109 համարի ծածկագիրը:

02.12.2021թ.-ին և 17.12.2021թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 02.12.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 17.12.2021թ.-ին:

2. «Լեյկո» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Լեյկո» ՍՊԸ-ն 25.11.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամի /այսուհետ՝ Պատվիրատու/ կողմից նախաձեռնվել է գնման ընթացակարգ էլեկտրոնային աճուրդ «ԷԱՃԱՊՁԲ-2022/16-7-ԵՊԲՀ» ծածկագրով /այսուհետ նաև՝ Աճուրդ/: Աճուրդը նախաձեռնվել է Պատվիրատուի կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով (գնման առարկան): Աճուրդի հայտարարությունը և հրավերը 15.11.2021թ.-ին հրապարակվել են գնումների տեղեկագրում, և հրավերով սահմանված կարգով և ժամկետում մինչև 22.11.2021թ.-ի ժամը 11:00-ն, «ԼԵՅԿՈ» ՍՊԸ-ի /այսուհետ՝ Ընկերություն/ կողմից ներկայացվել է թվով 21 չափաբաժինների մասով Աճուրդին մասնակցելու հայտ:

Աճուրդի հրավերի 8.2 կետի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդը պետք է սկսվեր 23.11.2021թ.-ի ժամը 11:00-ին: Աճուրդով գնման առարկա ապրանքները խմբավորված էին թվով 50 չափաբաժիններում, իսկ էլեկտրոնային աճուրդը կազմակերպվում է միաժամանակ առավելագույնը վեց չափաբաժնի համար համաձայն Աճուրդի հրավերի 8.3 կետի, որպիսի պարագայում յուրաքանչյուր հաջորդող վեց չափաբաժնի համար էլեկտրոնային աճուրդը

սկսվում է չափաբաժինների նախորդ խմբի էլեկտրոնային աճուրդի կազմակերպման համար սահմանված 30 րոպեն ավարտվելուց անմիջապես հետո: Այսինքն ստացվում է, որ կոնկրետ վեց չափաբաժնի մասով էլեկտրոնային աճուրդի մասնակիցը իր նվազեցվող գները կարող է առաջարկել միայն այդ վեց չափաբաժինների համար հատկացված ժամանակում 30 րոպեում, իսկ առաջին տեղը զբաղեցրած մասնակից է համարվում վերջին քայլը կատարած մասնակիցը:

Ակնհայտ է, որ Աճուրդի հրավերի 8.2-8.4 կետերով սահմանված էլեկտրոնային աճուրդի անցկացման կարգն ու պայմանները կարող են իրացվել և ապահովվել միայն, մասնակիցների գործողություններից զատ, նաև eauction.armeps.am էլեկտրոնային գնումների համակարգի անխափան աշխատանքի դեպքում: Մինչդեռ, նշենք, որ Աճուրդի շրջանակներում էլեկտրոնային աճուրդի կազմակերպման օրը 23.11.2021թ.-ին, eauction.armeps.am էլեկտրոնային գնումների համակարգն աշխատել է խափանումներով, ինչի պատճառով Ընկերությունը, որը վերոնշյալ 50 չափաբաժիններից 21-ով Աճուրդին մասնակցելու հայտ էր ներկայացրել, օբյեկտիվորեն զրկված է եղել այդ չափաբաժիններից մի մասի կապակցությամբ կայացած էլեկտրոնային աճուրդին մասնակցելու ու իր նվազեցվող գներն առաջարկելու, ըստ այդմ առաջին տեղը զբաղեցնելու, հետագայում նաև պայմանագիր կնքելու, ապրանքները մատակարարելու և շահույթ ստանալու հնարավորությունից:

eauction.armeps.am էլեկտրոնային գնումների համակարգի խափանման պատճառով Ընկերությունը զրկվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված գնման գործընթացին մասնակցելու իր իրավունքն իրացնելու հնարավորությունից՝ նկատի ունենալով, որ էլեկտրոնային աճուրդը ևս գնման գործընթացի փուլերից է, և գնման գործընթացին մասնակցելու Ընկերության իրավունքը կարող էր իրացված համարվել միայն այդ դեպքում, երբ հայտերը ներկայացնելուց բացի, Ընկերությունը հնարավորություն ունենար նաև մասնակցելու էլեկտրոնային աճուրդին՝ առաջարկելով իր նվազեցվող գները այդպիսով իրական հնարավորություն ունենալով զբաղեցնելու առաջին տեղը: Այնինչ, արձանագրենք, որ իրենից անկախ պատճառներով էլեկտրոնային գնումների համակարգի խափանման պայմաններում, Ընկերությունը չի կարողացել իրացնել գնման գործընթացին մասնակցելու իր իրավունքը դրանից բխող բոլոր անշահավետ հետևանքներով հանդերձ, ներառյալ շահույթ ստանալու հնարավորությունից զրկվելը:

Ընդ որում, նկատենք, որ Աճուրդի հրավերի 11.1 կետի 2-րդ պարբերության համաձայն՝ «սույն ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած, եթե սույն ընթացակարգի շրջանակում սահմանված հայտերի ներկայացման և/կամ տվյալ չափաբաժնի գծով աճուրդի իրականացման վերջնաժամկետը լրանալու պահի դրությամբ էլեկտրոնային գնումների համակարգը խափանված է»: Հետևաբար, ստացվում է, որ տվյալ դեպքում Աճուրդը պետք է հայտարարվի չկայացած, քանզի թվով 50 չափաբաժիններից մոտ 30 չափաբաժնի մասով կազմակերպված էլեկտրոնային աճուրդի համար սահմանված 30 րոպեի ամբողջ ժամանակահատվածում էլեկտրոնային գնումների համակարգը եղել է խափանված, ինչն էլ զրկել է Ընկերությանը դրանցից վերաբերելիների մասով իր գներն առաջարկելու և իր վերոնշյալ իրավունքն իրացնելու հնարավորությունից:

Վերոնշյալ փաստական և իրավական հիմքերն ու հիմնավորումները պարունակող դիմում է Ընկերության կողմից 23.11.2021թ.-ին ներկայացվել Աճուրդի գնահատող հանձնաժողովին /այսուհետ նաև՝ Հանձնաժողով/ խնդրելով «ԷԱՃԱՊՁԲ-2022/16-7-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգը /էլեկտրոնային աճուրդը/ հայտարարել չկայացած: Ի պատասխան դիմումի ստացել ենք Հանձնաժողովի 21.11.2021թ.-ի գրությունը, որով Հանձնաժողովը ևս ընդունել է այն փաստը, որ eauction.armeps.am էլեկտրոնային գնումների համակարգը 23.11.2021թ.-ին աշխատել է խափանումներով նշելով, որ Հանձնաժողովը տեղյակ է եղել դրա մասին: Նույն գրությամբ նաև նշվել է, որ խափանման ժամանակահատվածը կարող է հստակ արձանագրել միայն համակարգի սպասարկումն իրականացնող լիազոր մարմինը, ուստի Ընկերության կողմից սույն բողոքին զուգահեռ ներկայացվելու է նաև դիմում/հարցում լիազոր մարմնին՝ համապատասխան տեղեկությունն ստանալու համար, որի պատասխանն արդեն հուսով ենք, որ կկարողանանք ներկայացնել սույն բողոքի քննության նպատակով հրավիրվելիք նիստի ժամանակ: Միաժամանակ, բողոքի արդյունավետ քննությունն ապահովելու նպատակով նաև Ձեզ ենք խնդրում հնարավորության դեպքում լիազոր մարմնից ստանալ անհրաժեշտ տեղեկությունը կապված համակարգի խափանման հստակ ժամանակահատվածի և այդ ընթացքում կայացած էլեկտրոնային աճուրդի չափաբաժինների մասին: Նույն գրությամբ Հանձնաժողովը նշել է, որ նպատակահարմար չի գտնում Աճուրդը հայտարարել չկայացած, քանի որ 50 չափաբաժիններից 27-ն արդեն չկայացած են նախահաշվային գները գերազանցելու պատճառով, ուստի վերահայտարարվելու են, և նաև այն պատճառով, որ կայացած 23 չափաբաժինների մասով բացվել են մասնակիցների նվազագույն գները, այդ թվում նաև

Ընկերության գները, և այդ պայմաններում ընթացակարգը չկայացած հայտարարելը մրցակցության տեսակետից ոչ կոռեկտ է: Նույն գրությամբ Հանձնաժողովն արձանագրել է մեկ այլ էական նշանակություն ունեցող հանգամանք ևս, այն է էլեկտրոնային աճուրդը մեկնարկել է 23.11.2021թ.-ի ժամը 11:00-ին և ավարտվել նույն օրը ժամը 16:30-ին:

Հանձնաժողովի վերոնշյալ գրության (մերժման) կապակցությամբ նշենք, որ նույն գրության մեջ նշված, չկայացած հայտարարված 27 չափաբաժիններից 9-ի մասով Ընկերությունը ներկայացրել էր հայտ, հետևաբար, եթե eauction.armeps.am էլեկտրոնային գնումների համակարգն անխափան աշխատեր, Ընկերությունը հնարավորություն կունենար այդ 9 չափաբաժնի մասով գնային առաջարկն էլեկտրոնային աճուրդի ընթացքում նվազեցնելու և համապատասխանեցնելու առնվազն նախահաշվային գնին (և այդ մտադրությունն Ընկերությունն իսկապես ուներ), որպիսի պայմաններում առնվազն այդ 9 չափաբաժնի մասով ընթացակարգը կլիներ կայացած: Ինչ վերաբերում է Ընկերության կողմից հայտարկված մնացած 12 չափաբաժիններին, ապա նկատենք, որ այդ 12 չափաբաժիններից որոշների (թիվ 6, 32, 33, 34, 35 և այլ չափաբաժինների) մասով էլեկտրոնային աճուրդին Ընկերությունը մասնակցելու հնարավորություն չի ունեցել eauction.armeps.am էլեկտրոնային գնումների համակարգի խափանման պատճառով, ինչն էլ փաստացի զրկել է Ընկերությանը գնման գործընթացին մասնակցելու իր իրավունքն իրացնելու հնարավորությունից:

Ընդ որում, նկատենք, որ Աճուրդի հրավերի 8.2 կետի վերջին նախադասության համաձայն՝ Աճուրդ չի կարող կազմակերպվել ոչ աշխատանքային օրերին կամ աշխատանքային օրվա ժամը 16:00-ից հետո: Մինչդեռ, ինչպես պարզ է դառնում Հանձնաժողովի վերոնշյալ գրությունից, էլեկտրոնային աճուրդն ավարտվել է 23.11.2021թ.-ի ժամը 16:30-ին, ինչով խախտվել են Աճուրդի հրավերի 8.2 կետի վերջին նախադասության պահանջները: Այլ կերպ ասած 23.11.2021թ.-ի ժամը 16:00-ից 16:30-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրոնային աճուրդի կազմակերպումն իրավաչափ չէ, և առնվազն այդ ընթացքում էլեկտրոնային աճուրդի դրված չափաբաժինների մասով Աճուրդը միանշանակ ենթակա է չկայացած հայտարարման: Իսկ թե որ չափաբաժիններն են կայացել այդ ժամանակահատվածում, կարծում ենք, որ առավել հավաստի կլինի տեղեկանալ Պատվիրատուից և/կամՀանձնաժողովից:

Վերոգրյալ ամբողջի հիման վրա արձանագրենք, որ Աճուրդը չկայացած հայտարարելու մեր պահանջը հիմնվում է հետևյալ երկու անժխտելի փաստերի վրա՝

1. eauction.armeps.am էլեկտրոնային գնումների համակարգն աշխատել է խափանումներով, ինչը զրկել է Ընկերությանը վերոնշյալ մի շարք չափաբաժինների մասով էլեկտրոնային աճուրդին (գնման գործընթացին) մասնակցելու իր իրավունքն իրացնելու հնարավորությունից,

2. էլեկտրոնային աճուրդը կազմակերպվել է սահմանված կարգի Աճուրդի հրավերի 8.2 կետի վերջին նախադասության պահանջների խախտմամբ:

Աճուրդն ամբողջությամբ չկայացած հայտարարելու մեր պահանջը բխում է Աճուրդի բոլոր մասնակիցների շահերից, նաև վերջիններիս հավասարության և մրցակցության սկզբունքներից, և միայն Աճուրդն ամբողջությամբ չկայացած հայտարարելու միջոցով է հնարավոր լինելու ապահովել նշված սկզբունքների իրացումը, բացառել հնարավոր հետագա վեճերը, կանխել Աճուրդի մասնակիցների հնարավոր վնասներ կրելը»:

Վերոգրյալների հիման վրա՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է՝ պարտավորեցնել «ԷԱՃԱՊՁԲ-2022/16-7-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունելով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշում:

Ի լրումն ներկայացված բողոքի, Ընկերությունը 07.12.2021թ.-ին ներկայացված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/109 բողոքարկման վարույթով 02.12.2021 թվականին կայացած նիստի ընթացքում «ԼԵՅԿՈ» ՍՊԸ-ի /այսուհետ՝ Ընկերություն/ ներկայացուցչի կողմից ներկայացվել է ապացույց (համակարգչային էկրանից արտատպում) առ այն, որ 23.11.2021թ.-ին, ժամը 14:11-ի դրությամբ eauction.armeps.am էլեկտրոնային գնումների համակարգը եղել է խափանված:

Միաժամանակ նույն նիստի ընթացքում քննարկվել են ՀՀ ֆինանսների նախարարությունից Ընկերությանը և Պատվիրատուին հասցեագրված գրությունները, որոնք վերաբերում են «ԷԱՃԱՊՁԲ-2022/16-7-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 23.11.2021թ.-ին կայացած աճուրդի ընթացքում eauction.armeps.am էլեկտրոնային գնումների համակարգի խափանման ժամանակին և այն չափաբաժիններին, որոնց մասով աճուրդը փաստացի չի իրականացվել: Ընդ որում, Ընկերությանը և Պատվիրատուին հասեցագրված գրություններում առկա են առերևույթ հակասություններ կապված հենց չափաբաժինների հետ, որոնց մասով աճուրդը փաստացի չի իրականացվել համակարգի խափանման պատճառով: Բողոքաբերս չի բացառում, որ Ձեր հարցմանն ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարության կողմից կարող է տրամադրվել հիշյալ

գրությունների բովանդակությանը չհամընկնող կամ գուցե դրանցից մեկի բովանդակությունը կրկնող պատասխան գրություն, որի պայմաններում, կարծում ենք, օբյեկտիվորեն անհնար է լինելու հստակորեն որոշել ինչպես այն չափաբաժինների քանակը, որոնց մասով աճուրդը փաստացի տեղի չի ունեցել, ինչպես նաև համակարգի խափանման ժամանակը, քանզի թեև ՀՀ ֆինանսների նախարարությունն իր հիշյալ գրություններում, որպես խափանման ժամանակահատված, միևնույն ժամանակն է արձանագրել, այդուհանդերձ, Ընկերությունն իր հերթին ունի նաև և արդեն իսկ ներկայացրել է ապացույց առ այն, որ բացի ՀՀ ֆինանսների նախարարության կողմից վկայակոչված ժամանակահատվածից, համակարգը խափանվել է նաև այլ ժամանակահատվածում: Ընդ որում, ինչպես Ընկերության ներկայացուցիչն է նշել 02.12.2021թ.-ին կայացած նիստի ընթացքում, eauction.armeps.am էլեկտրոնային գնումների համակարգը այնպես չէ, որ դեռևս որպես խափանման ժամանակահատված չարձանագրված մնացյալ ժամանակահատվածներում աշխատել է անխափան, և առկա է եղել հնարավորություն իրականացնելու գնի նվազեցում: Այլ կերպ ասած մի շարք չափաբաժինների դեպքում թեև մի որոշակի ժամանակ eauction.armeps.am էլեկտրոնային գնումների համակարգն աշխատել է, որոշակի թվով մասնակիցներ հնարավորություն են ունեցել այդ ընթացքում իրականացնելու գնի նվազեցում, այդուհանդերձ, երբ Ընկերության մոտ առկա է եղել ցանկություն կատարելու իր գնի նվազեցումը, համակարգը կրկին խափանվել է, ինչի արդյունքում հաղթող է ճանաչվել մեկ այլ մասնակից (օրինակ թիվ 27 չափաբաժնի դեպքում):

Վերոգրյալի հիման վրա գուցե հարց առաջանա, որ Ընկերության կողմից ֆիքսված խափանումը հետևանք է եղել ոչ թե eauction.armeps.am էլեկտրոնային գնումների համակարգի, այլ Ընկերության ինտերնետ կապի խափանման: Այս մասով նշենք, որ Ընկերությունն օգտվում է <ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ> ՓԲԸ-ի (ապրանքանիշ «Ռոստելեկոմ», «Ռոստելեկոմ» ԲԲԸ դուստր ձեռնարկություն) կողմից մատուցվող շարժական ինտերնետի ծառայություններից: Ընկերության կողմից հարցում է կատարվել <ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ> ՓԲԸ-ին պարզելու 23.11.2021թ.-ին, ժամը 12:00-16:00-ն ընկած ժամանակահատվածում արձանագրվել է արդյոք ինտերնետային ծառայության որևէ խափանում, ի պատասխան որի ստացել ենք <ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ> ՓԲԸ-ի պատասխան գրությունը, որով հայտնվել է, որ նշված ժամանակահատվածում ինտերնետային ծառայության որևէ խափանում չի արձանագրվել: Հետևաբար, առավել հիմնավոր է դառնում Ընկերության պնդումն առ այն, որ իրականում առկա է եղել հենց eauction.armeps.am էլեկտրոնային գնումների

համակարգի խափանում, ընդ որում ոչ միայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից վկայակոչված ժամանակահատվածում, որպիսի պայմաններում միակ իրավաչափ և արդարացի լուծումը «ԷԱՃԱՊՁԲ-2022/16-7-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի չկայացած հայտարարումն է այդպիսով հնարավորություն ընձեռելով ընթացակարգի մասնակիցներին, նաև ընթացակարգին մասնակցելու ցանկություն ունեցող այլ անձանց հավասար պայմաններում մասնակցելու էլեկտրոնային աճուրդին, իրացնելու իրենց՝ գնման գործընթացներին մասնակցելու «Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված իրավունքը:»:

3. <u>«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամվի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 26.11.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/19441-2021 գրությամբ դիմել է «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամվին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Լեյկո» ՍՊԸ-ի կողմից 25.11.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 30.11.2021թ.-ի թիվ 09/3055 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 26.11.2021թ. գրության Ձեզ ենք ներկայացնում «Լեյկո» ՍՊԸ-ի կողմից 25.11.2021թ. ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/109 ծածկագրով բողոքին վերաբերվող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները և «Երևանի Մխիթար շերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի /այսուհետ՝ Համալսարան/ գրավոր դիրքորոշումը:

15.11.2021թ. Համալսարանի կողմից հայտարարված «ԷԱՃԱՊՁԲ-2022/16-7-ԵՊԲՀ» ծածկագրով մրցույթի էլեկտրոնային հակադարձ աճուրդը մեկնարկել է նոյեմբերի 23-ին ժամը 11.00-ին և ավարտվել է նույն օրը ժամը 16.30-ին:

23.11.2021թ. «ԷԱՃԱՊՁԲ-2022/16-7-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին ուղղված գրությամբ «Լեյկո» ՍՊԸ-ն խնդրել է չկայացած

հայտարարել վերոնշյալ ծածկագրով էլեկտրոնային աճուրդը էլեկտրոնային ձևով աճուրդների իրականացումն ապահովող համակարգի /այսուհետ՝ համակարգ/ www.eauction.armeps.am կայքի, խափանված լինելու հիմնավորմամբ:

24.11.2021թ. «Լեյկո» ՍՊԸ-ին ուղղված գրությամբ հանձնաժողովը մերժել է «Լեյկո» ՍՊԸ-ի խնդրանքը հետևյալ պատճառաբանումներով. 1. խափանման ժամանակահատվածը հստակ կարող է արձանագրել միայն համակարգի սպասարկումն իրականացնող լիազոր մարմինը, 2. հայտարարված չափաբաժինների մեծամասնությունը չի կայացել, 3. Կայացած չափաբաժինների մասով բացվել են մասնակիցների նվազագույն գները:

Բացի այդ՝

1. ԷԱՃԱՊՁԲ-2022/16-7-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 11.1-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Սույն ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած, եթե սույն ընթացակարգի շրջանակում սահմանված հայտերի ներկայացման և/կամ տվյալ չափաբաժնի գծով աճուրդի իրականացման վերջնաժամկետը լրանալու պահի դրությամբ էլեկտրոնային գնումների համակարգը խափանված է:

2. ՀՀ ֆինանսների նախարարի գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգը հաստատելու մասին թիվ 600-Ն հրամանի 15-րդ կետի համաձայն՝

Սույն կարգի իմաստով բողոքարկման ընթացակարգի պարտադիր կողմեր են համարվում պատվիրատուն, բողոք և/կամ համանման բողոք ներկայացրած անձը (անձինք), ինչպես նաև էլեկտրոնային գնումների համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող անձը (անձինք) եթե բողոք բերողի իրավունքի ենթադրյալ խախտումը վերաբերում է էլեկտրոնային գնումների համակարգի աշխատանքին:

Փաստորեն, համակարգի խափանված կամ չխափանված լինելու վերաբերյալ հավաստումը կարող է տրվել միայն համակարգի տեխնիկական սպասարկումը իրականացնող մարմնի ՀՀ ֆինանսների նախարարության կողմից:

29.11.2021թ. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ստացվել է թիվ 03/26-1/19280-2021 շրջաբերական-գրություն, որում հստակ նշված է 23.11.2021թ.-ին համակարգի խափանված լինելու ժամանակահատվածը և որպես հետևանք Օրենքի 37-րդ հողվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով չկայացված հայտարարվող չափաբաժիևների համարները /գրությունը կցվում է/:

Առաջնորդվելով ՀՀ ֆինանսների նախարարության շրջաբերական-գրությամբ և հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Լեյկո» ՍՊԸ-ն ինքն է առաջարկել դիմել լիազոր

մարմնին համակարգի խափանված լինելու ժամանակահատվածը հստակեցնելու նպատակով խնդրում ենք «Լեյկո» ՍՊԸ-ի բողոքը բավարարել հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության շրջաբերական-գրությունը «ԷԱՃԱՊՁԲ-2022/16-7-ԵՊԲՀ» ծածկագրով կեկտրոնային աճուրդի թիվ 13-ից 24-րդ չափաբաժինների մասով:»:

Պատվիրատուն, ի լրումն ներկայացված դիրքորոշման, 09.12.2021թ.-ին թիվ 09/3126 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ձեզ ենք ներկայացնում «Լեյկո» ՍՊ ընկերության /այսուհետ՝ Ընկերություն/ կողմից 07.12.2021թ. Ձեզ ուղղված գրության վերաբերյալ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի /այսուհետ՝ Համալսարան/ գրավոր կարծիքը:

Ինչ վերաբերվում է Համալսարանին և Ընկերությանը հասցեագրված գրություններում առկա առերևույթ հակասություններին, Համալսարանն արձանագրում է, որ որևէ հակասություն չկա: Երկու գրությունների մեջ էլ նշված է ժամը 12:00-ից 12:41 ժամանակահաավածը, որը համապաասխանում է «ԷԱՃԱՊՁԲ-2022/16-7-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 13-ից մինչև 24-րդ չափաբաժինևերի հակադարձ աճուրդի իրականացման ժամանակահատվածին, որոնք, ըստ 29.11.2021թ. ՀՀ ֆինանսների նախարարության թիվ 03/26-1/19280-2021 շրջաբերական-գրության պետք է հայտարարվեն չկայացած:

Ինչ վերաբերվում է 27-րդ չափաբաժևի մասով Ընկերության կողմից գնի նվազեցում կատարելու ցանկությանը և այդ չափաբաժնի մասով մեկ այլ մասնակցի ընտրված ճանաչվելուն, Համալսարանը փաստում է, որ.

1. հիշյալ չափաբաժնի մասով հակադարձ աճուրդի իրականացվել է ժամը 14:00-ից մինչև 14:30 ժամանակահատվածում, որի ընթացքում ըստ էլեկտրոնային գնումների համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող լիազոր մարմնի գրավոր համակարգն աշխատել է անխափան,

2. հիշյալ չափաբաժնի մասով «ԷԱՃԱՊՁԲ-2022/16-7-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդն այնուամենայնիվ չկայացած է հայտարարվելու առաջարկված նվազագույն գինն այդ գնումն իրականացնելու համար նախատեսված ֆինանսական միջոցները գերազանցելու պատճառով, և հաշվի առնելով, որ այդ չափաբաժինը «Ներարկիչ 10մլ»-ն է, որը առաջնային անհրաժեշտության ապրանք է համալսարանի ենթակայության տակ գործող հիվանդանոցների համար, այն միանշնակ վերահայտարարվելու է, և Ընկերությունը դեռ հնարավորություն կունենա այն հաղթելու:

Ինչ վերաբերվում է «Ռոստելեկոմ» ԲԲ ընկերության կողմից ներկայացված գրությանը, հայտնում ենք, որ բացի համացանցի խափանումից էլեկտրոնային համակարգով հակադարձ աճուրդի իրականացման ժամանակահատվածում գին չնվազեցնելու պատճառները կարող են լինել տարբեր, օրինակ Ընկերության կողմից այդ պահին գին չնվազեցնելու որոշում, գին նվազեցնող աշխատակցի բացակայություն և այլ բազմաթիվ չապացուցվող փաստեր:

Համալսարանը նաև արձանագրում է, որ ժամ առ ժամ գրանցվող գնաճի պայմաններում յուրաքանչյուր պատվիրատուի համար յուրաքանչյուր կայացած չափաբաժին ձեռքբերում է:

Վերոգրյալով պայմանավորված համալսարանը, ինչպես և նախկինում, խնդրում է «Լեյկո» ՍՊԸ-ի բողոքը բավարարել մասնակի 13-ից 24-րդ չափաբաժինների մասով:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2021/108 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամվի կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով 15.11.2021թ.-ին հայտարարվել է «ԷԱՃԱՊՁԲ-2022/16-7-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 22.11.2021թ.-ի ժամը 11:00 ներառյալ, որին ի թիվս այլ մասնակիցների 1-ին, 3-րդ, 6-րդ, 8-ից 10-րդ, 16-րդ, 21-րդ, 27-րդ, 32-ից 40-րդ և 48-ից 50-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել նաև «Լեյկո» ՍՊԸ-ն:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 24.11.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ 1-ից 4-րդ, 8-ից 14-րդ, 16-րդ, 20-ից 28-րդ, 31-րդ, 38-րդ և 41-ից 44-րդ չափաբաժինների մասով գնման ընթացակարգը հայտարարվել է չկայացած՝ հայտերից ոչ մեկը հրավերի պայմաններին չհամապատասխանելու հիմքով:

iv. ՀՀ ֆինանսների նախարարության 24.11.2021թ.-ի թիվ 03/26-1/19280-2021 գրության համաձայն՝ 23.11.2021թ.-ի ժամը 12:00-ից մինչև ժամը 12:41-ը էլեկտրոնային

աճուրդի համակարգը խափանվել է, ինչի արդյունքում խոչընդոտվել է ինչպես ժամը 12:00-ից մինչև 13:00-ն անցկացվելիք աճուրդների, այնպես էլ նշված ժամանակահատվածում հրավերներով հայտերի ներկայացման վերջնաժամկետ սահմանված ընթացակարգերին մասնակցության հայտերի ներկայացման բնականոն ընթացքը:

Միաժամանակ հայտնել են, որ ՀՀ կառավարության 02.05.2019թ.-ի թիվ 516-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված գնման ընթացակարգը «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած, եթե տվյալ ընթացակարգի շրջանակում սահմանված հայտերը ներկայացնելու վերջանաժամկետը լրանալու պահի դրությամբ համակարգը խափանված է:

Կից ներկայացվել է խափանված չափաբաժինների և ընթացակարգերի ցանկը, որի համաձայն՝ «ԷԱՃԱՊՁԲ-2022/16-7-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի 13-ից 24-րդ չափաբաժինները ընդգրկված են նշված ցանկում:

v. ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի պատասխան «Լեյկո» ՍՊԸ-ի 24.11.2021թ.-ի և 25.11.2021թ.-ի գրությունների, հայտնել է, որ 24.11.2021թ.-ի թիվ 03/26-1/19280-2021 գրության համաձայն՝ 23.11.2021թ.-ի ժամը 12:00-ից մինչև ժամը 12:41-ը էլեկտրոնային աճուրդի համակարգը խափանվել է, ինչի արդյունքում խոչընդոտվել է Ընկերության կողմից հայտով ներկայացված ժամը 12:00-ին կայանալիք 16-րդ և 12:30-ին կայանալիք 21-րդ չափաբաժինների հակադարձ աճուրդները:

Միաժամանակ Ընկերությանը հայտնել են, որ նշվածի վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարությունը 24.11.2021թ.-ի թիվ 03/26-1/19280-2021 գրությամբ տեղեկացրել է հիշյալ գնման ընթացակարգը կազմակերպած պատվիրատուին:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Լեյկո» ՍՊԸ-ի կողմից 25.11.2021թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին

մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը:

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը:

3. Օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին, դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը, ոչ մի հայտ չի ներկայացվել, պայմանագիր չի կնքվում:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 2019 թվականի մայիսի 2-ի թիվ 516-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված գնման ընթացակարգը «Գնումների մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած, եթե տվյալ ընթացակարգի շրջանակում սահմանված հայտերը ներկայացնելու վերջանաժամկետը լրանալու պահի դրությամբ համակարգը խափանված է:

ՀՀ կառավարության 18.05.2017թ.-ի թիվ 534-Ն հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 10-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման և ընտրված մասնակցի հետ պայմանագրի կնքման ժամանակ գործում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգով նախատեսված կարգավորումները հաշվի առնելով, որ հրավերով նախատեսվում է նաև, որ աճուրդի ընդհանուր տևողությունը սահմանվում է 30 րոպե: Աճուրդի ընթացքում կատարվող յուրաքանչյուր քայլի արդյունքում նվազեցվող գումարը չպետք է պակաս լինի աճուրդն սկսելու պահին ներկայացված նվազագույն գնային առաջարկի մեկ տոկոսից: Եթե աճուրդի ընդհանուր տևողության ընթացքում որևէ քայլ կատարելու պահից հաշված 5-րդ րոպեն լրանալը չի կատարվում նոր քայլ, ապա աճուրդը համարվում է ամփոփված, և վերջին քայլը կատարած մասնակիցը համարվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

Կարգի 13-րդ կետի համաձայն՝ աճուրդը սկսվում է հայտերը ներկայացնելու ժամկետը լրանալուն հաջորդող օրը՝ հրավերով սահմանված ժամին:

Կարգի 17-րդ կետի համաձայն՝ աճուրդն ամփոփվելու պահի դրությամբ համակարգն ավտոմատ եղանակով պատվիրատուին և հայտեր ներկայացրած մասնակիցներին ներկայացնում է աճուրդի արդյունքները՝ ըստ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների անվանումների և զբաղեցրած տեղերի:

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամվի կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով 15.11.2021թ.-ին հայտարարված «ԷԱՃԱՊՁԲ-2022/16-7-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.2-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդը սկսվում է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 23.11.2021թ.-ին ժամը 11:00-ին:

Հրավերի 8.3-րդ կետի համաձայն՝ գնման ընթացակարգը վեց չափաբաժնից ավելի լինելու դեպքում էլեկտրոնային աճուրդը կազմակերպվում է միաժամանակ առավելագույնը վեց չափաբաժնի համար: Վեցից ավել չափաբաժինների դեպքում յուրաքանչյուր հաջորդող վեց չափաբաժնի համար էլեկտրոնային աճուրդը սկսվում է չափաբաժինների նախորդ խմբի էլեկտրոնային աճուրդի կազմակերպման համար սահմանված 30 րոպեն

ավարտվելուց անմիջապես հետո: Եթե չափաբաժինների քանակը չի սպառվում մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը 16:00, ապա մնացած չափաբաժինների համար էլեկտրոնային աճուրդ կազմակերպվում է տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվա ժամը 09:00-ին՝ հաշվի առնելով սույն կետով սահմանված պայմանները:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ հրավերով սահմանվում է, որ աճուրդը սկսվում է հայտերը ներկայացնելու ժամկետը լրանալուն հաջորդող օրը՝ հրավերով սահմանված ժամին: Աճուրդի ընդհանուր տևողությունը պետք է լինի 30 րոպե: Աճուրդն ամփոփվելու պահի դրությամբ համակարգն ավտոմատ եղանակով պատվիրատուին և հայտեր ներկայացրած մասնակիցներին ներկայացնում է աճուրդի արդյունքները՝ ըստ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների անվանումների և զբաղեցրած տեղերի:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել նաև, որ գործադիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե տվյալ ընթացակարգի շրջանակում սահմանված հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալու պահի դրությամբ համակարգը խափանված է, ապա գնման ընթացակարգը հայտարարվում է չկայացած՝ ընթացակարգի շրջանակներում պայմանագիր չկնքելու հիմքով:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամվի կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով 15.11.2021թ.-ին հայտարարված «ԷԱՃԱՊՁԲ-2022/16-7-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանված եղել 22.11.2021թ.-ի ժամը 11:00 ներառյալ, որին ի թիվս այլ մասնակիցների 1-ին, 3-րդ, 6-րդ, 8-ից 10-րդ, 16-րդ, 21-րդ, 27-րդ, 32-ից 40-րդ և 48-ից 50-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել նաև «Լեյկո» ՍՊԸ-ն: Հանձնաժողովի 24.11.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետով՝ 1-ից 4-րդ, 8-ից 14-րդ, 16-րդ, 20-ից 28-րդ, 31-րդ, 38-րդ և 41-ից 44-րդ չափաբաժինների մասով գնման ընթացակարգը հայտարարվել է չկայացած՝ հայտերից ոչ մեկը հրավերի պայմաններին չհամապատասխանելու հիմքով:

ՀՀ ֆինանսների նախարարության 24.11.2021թ.-ի թիվ 03/26-1/19280-2021 գրության համաձայն՝ 23.11.2021թ.-ի ժամը 12:00-ից մինչև ժամը 12:41-ը էլեկտրոնային աճուրդի համակարգը խափանվել է, ինչի արդյունքում խոչընդոտվել է ինչպես ժամը 12:00-ից մինչև 13:00-ն անցկացվելիք աճուրդների, այնպես էլ նշված ժամանակահատվածում

հրավերներով հայտերի ներկայացման վերջնաժամկետ սահմանված ընթացակարգերին մասնակցության հայտերի ներկայացման բնականոն ընթացքը:

Միաժամանակ հայտնել են, որ ՀՀ կառավարության 02.05.2019թ.-ի թիվ 516-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված գնման ընթացակարգը «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած, եթե տվյալ ընթացակարգի շրջանակում սահմանված հայտերը ներկայացնելու վերջանաժամկետը լրանալու պահի դրությամբ համակարգը խափանված է:

Կից ներկայացվել է խափանված չափաբաժինների և ընթացակարգերի ցանկը, որի համաձայն՝ «ԷԱՃԱՊՁԲ-2022/16-7-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի 13-ից 24-րդ չափաբաժինները ընդգրկված են նշված ցանկում:

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի պատասխան «Լեյկո» ՍՊԸ-ի 24.11.2021թ.-ի և 25.11.2021թ.-ի գրությունների, հայտնել է, որ 24.11.2021թ.-ի թիվ 03/26-1/19280-2021 գրության համաձայն՝ 23.11.2021թ.-ի ժամը 12:00-ից մինչև ժամը 12:41-ը էլեկտրոնային աճուրդի համակարգը խափանվել է, ինչի արդյունքում խոչընդոտվել է Ընկերության կողմից հայտով ներկայացված ժամը 12:00-ին կայանալիք 16-րդ և 12:30-ին կայանալիք 21-րդ չափաբաժինների հակադարձ աճուրդները:

Միաժամանակ Ընկերությանը հայտնել են, որ նշվածի վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարությունը 24.11.2021թ.-ի թիվ 03/26-1/19280-2021 գրությամբ տեղեկացրել է հիշյալ գնման ընթացակարգը կազմակերպած պատվիատուին:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով Ընկերության բողոքով ներկայացրած հանգամանքներին, ուսումնասիրելով Հանձնաժողովի 24.11.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ չկայացած հայտարարված չափաբաժինների մասին որոշումը, ՀՀ ֆինանսների նախարարության 24.11.2021թ.-ի թիվ 03/26-1/19280-2021 և կից ներկայացված ցանկը՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Լեյկո» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված միայն 12:00-ին կայանալիք 16-րդ և 12:30-ին կայանալիք 21-րդ չափաբաժինների մասով հակադարձ աճուրդներն են ընդգրկում համակարգի խափանված լինելու ժամանակահատվածը, ինչից ելնելով նշված չափաբաժինները պետք է հայտարարել չկայացած: Սակայն, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Հանձնաժողովը 24.11.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ չկայացած է հայտարարել մի շարք չափաբաժիններ՝ այդ թվում նաև «Լեյկո» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված՝ խափանման ժամանակահատվածում

ընդգրկված 16-րդ և 21-րդ չափաբաժինները, որպիսի պայմաններում վերը նշված չափաբաժինների մասով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին Ընկերության կողմից ներկայացած պահանջը դառնում է առարկայազուրկ և ըստ այդմ՝ մերժման ենթակա:

Ինչ վերաբերում է «Լեյկո» ՍՊԸ-ի կողմից գնման ընթացակարգի մնացած բոլոր չափաբաժինները ևս չկայացած հայտարարելու պահանջին և Ընկերության կողմից ներկայացված բողոքի 13-ից 24-րդ չափաբաժինների մասով ընթացակարգը չկայացած հայտարարելուն պարտավորեցնելու պահանջը Պատվիրատուի կողմից ընդունելուն, ապա Բողոքներ քննող անձը փաստում է, որ վերոնշյալ պահանջներն անհիմն են և ենթակա են մերժման, քանի որ Հանձնաժողովը 24.11.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ 13-րդ, 14-րդ, 16-րդ և 20-ից 24-րդ չափաբաժինները հայտարարել է չկայացած, ուստի այս պարագայում նույնպես Ընկերության և Պատվիրատուի պահանջները դառնում են առարկայազուրկ և ենթակա մերժման: Իսկ մնացած՝ 15-րդ, 17-րդ, 18-րդ և 19-րդ չափաբաժինների մասով «Լեյկո» ՍՊԸ-ի կողմից հայտ չի ներկայացվել, ինչի արդյունքում Ընկերությունը չի զրկվել դրանց մասով իր գներն առաջարկելու և իր իրավունքն իրացնելու հնարավորությունից՝ ինչպես նշվել է բողոքում, որպիսի պայմաններում 15-րդ, 17-րդ, 18-րդ և 19-րդ չափաբաժինների մասով համակարգի խափանված լինելու հանգամանքը չի կարող հիմք հանդիսանալ բողոքը՝ վերոնշյալ չափաբաժինների մասով մասնակի բավարարելուն, այն է՝ գնման ընթացակարգը այդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելուն:

Բացի այդ, Բողոքներ քննող անձն հարկ է համարում հավելել նաև, որ եթե Պատվիրատուի մոտ առկա է որոշ չափաբաժինների մասով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու ցանկություն, ապա վերջինս կարող է օգտվել օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորություններից:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Լեյկո» ՍՊԸ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքները սույն որոշմամբ բերված իրավական ու փաստական հանգամանքների և արված վերլուծությունների ամբողջությամբ անհիմն են, ուստի ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման ամբողջությամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Լեյկո» ՍՊԸ-ի կողմից 25.11.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/108 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**